



ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ  
ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ**



ՀՀ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳԻ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

# Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք



- ✓ ՄԹՆՈՂՈՐՏԱՅԻՆ ՕԴ
- ✓ ՄԹՆՈՂՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐ
- ✓ ՄԱԿԵՐԵՎՈՒԹՅԱՅԻՆ ՋՐԵՐ
- ✓ ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ
- ✓ ՀՈՂԱՅԻՆ ԾԱԾԿՈՒՅԹ
- ✓ ԹԱՓՈՆՆԵՐ

## Բովանդակություն

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴ .....	4
Երևան.....	4
Գյումրի.....	13
Վանաձոր .....	14
Ալավերդի.....	16
Հրազդան .....	19
Արարատ .....	22
Հանրապետության տարբեր բնակավայրեր.....	24
ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ .....	25
Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք .....	25
Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք.....	30
Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք .....	34
Սևանի ջրավազանային կառավարման տարածք.....	40
Արարատյան ջրավազանային կառավարման տարածք.....	43
Հարավային ջրավազանային կառավարման տարածք.....	46
ԹԱՓՈՆՆԵՐ .....	52
Ծաղկաձորում շրջակա միջավայրի մոնիթորինգ.....	53
«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր (EMEP)» .....	60
Հավելված 1. ՀՀ գետերի ջրի որակը 2018թ. 1-ին եռամսյակում.....	62
Հավելված 2. ՀՀ ջրամբարների ջրերի որակը 2018թ. 1-ին եռամսյակում.....	76
Հավելված 3. Արաքս գետի ջրի մոնիթորինգի արդյունքները 2018թ. 1-ին եռամսյակում ....	77
Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետերը.....	79
Մակերևութային ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ .....	83
Ստորերկրյա ջրերում որոշվող ցուցանիշների ցանկ.....	84
Տեղումներում որոշվող ցուցանիշների ցանկ .....	84
Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները.....	85
Հողում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները .....	85
Մակերևութային ջրերի էկոլոգիական նորմերը.....	86
Մակերևութային ջրերի ձկնատնտեսական սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ.....	87

**ՀՀ մթնոլորտային օդի, մակերևութային ջրերի,  
ստորերկրյա քաղցրահամ ջրերի որակի  
մոնիթորինգի դիտացանց**



## ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕՂ

2018թ. 1-ին եռամսյակում մթնոլորտային օդի դիտարկումներ կատարվել են հանրապետության Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Կապան, Քաջարան քաղաքներում: Ընդհանուր առմամբ վերը թվարկված բնակավայրերում գործում է 14 ստացիոնար դիտակայան, որոնցից 4 ստացիոնար դիտակայանում (Երևան և Ալավերդի քաղաքներում) կատարվում են շուրջօրյա ավտոմատ դիտարկումներ, և շարժական (պասիվ) նմուշառման 197 դիտակետ: Մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար հունվար, փետրվար, մարտ ամիսներին ակտիվ նմուշառմամբ վերցվել է օդի 3388 փորձանմուշ: Հանրապետության 9 բնակավայրի պասիվ նմուշառման դիտակետերից վերցվել է օդի 4276 փորձանմուշ: Երևան և Ալավերդի քաղաքների ստացիոնար կայաններում կատարվել է օդի՝ համապատասխանաբար 51943 և 27286 ավտոմատ դիտարկում:

Երևան, Գյումրի, Վանաձոր, Ալավերդի, Հրազդան, Արարատ, Չարենցավան, Կապան, Քաջարան, Օաղկաձոր քաղաքների մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական և միջին շաբաթական կոնցենտրացիաների բաշխվածության քարտեզները հասանելի են [www.armmonitoring.am](http://www.armmonitoring.am) ինտերնետային կայքում:

### Երևան

Երևան քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու\*, ծծմբի երկօքսիդի\*\*, ազոտի օքսիդների, ածխածնի մոնօքսիդի\*\*\* և գետնամերձ օզոնի դիտարկումներ: Քաղաքում գործում է շարժական (պասիվ նմուշառման) 42 դիտակետ և հինգ ստացիոնար դիտակայան (№1, №2, №7, №8, №18), որից երկուսում՝ №2 և №18 կատարվում են միայն ակտիվ (24-ժամյա), իսկ մնացած երեք դիտակայանում (№1, №7, №8)՝ ինչպես ակտիվ, այնպես էլ ավտոմատ դիտարկումներ:

2018թ. 1-ին եռամսյակում ստացիոնար դիտակայաններից ակտիվ նմուշառմամբ վերցվել է օդի 1658, շարժական դիտակետերից պասիվ նմուշառմամբ՝ 973 փորձանմուշ: Ավտոմատ եղանակով ստացիոնար դիտակայաններում կատարվել է ածխածնի մոնօքսիդի՝ 24110, ծծմբի երկօքսիդի՝ 22154, ազոտի օքսիդների՝ 5679 դիտարկում:

Որոշված միացություններից ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան փետրվար և մարտ ամիսներին գերազանցել է սահմանային թույլատրելի կոնցենտրացիան (ՄԹԿ): Մնացած միացությունների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները:

\* կախված մասնիկներ

\*\* անհիդրիդ ծծմբային

\*\*\* ածխածնի օքսիդ

Երևան քաղաքի մթնոլորտային օդի 2018թ. 1-ին եռամսյակում կատարված դիտարկումների արդյունքները (ակտիվ նմուշառում)

**Հունվար**

Աղտոտող նյութ	ՄԹԿ (միջին օրական), մգ/մ <sup>3</sup>	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup> (դիտակայանի համար)	Դիտարկումների քանակ	ՄԹԿ-ից գերազանցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.031	0.067 (դիտ. № 1)	125	10
Ազոտի երկօքսիդ	0.04	0.020	0.062 (դիտ. № 18)	125	9
Ընդհանուր փոշի	0.15	0.118	0.441 (դիտ. № 18)	125	35
Գետնամերձ օզոն	0.03	0.006	0.019 (դիտ. № 2)	125	-




**Փետրվար**

Աղտոտող նյութ	ՄԹԿ (միջին օրական), մգ/մ <sup>3</sup>	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup> (դիտակայանի համար)	Դիտարկումների քանակ	ՄԹԿ-ից գերազանցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.035	0.068 (դիտ. № 7)	140	16
Ազոտի երկօքսիդ	0.04	0.022	0.052 (դիտ. № 18)	140	11
Ընդհանուր փոշի	0.15	0.156	0.489 (դիտ. № 2)	138	66
Գետնամերձ օզոն	0.03	0.007	0.014 (դիտ. № 1)	140	-




**Մարտ**

Աղտոտող նյութ	ՄԹԿ (միջին օրական), մգ/մ <sup>3</sup>	Միջին ամսական կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup>	Առավելագույն կոնցենտրացիա, մգ/մ <sup>3</sup> (դիտակայանի համար)	Դիտարկումների քանակ	ՄԹԿ-ից գերազանցումների քանակ
Ծծմբի երկօքսիդ	0.05	0.031	0.095 (դիտ. № 7)	155	14
Ազոտի երկօքսիդ	0.04	0.023	0.074 (դիտ. № 18)	155	18
Ընդհանուր փոշի	0.15	0.163	0.617 (դիտ. № 2)	137	56
Գետնամերձ օզոն	0.03	0.006	0.020 (դիտ. № 18)	153	-




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.






Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.










Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները (ակտիվ նմուշառում)։




Երևանի Կենտրոն համայնքի մթնոլորտային օդում ածխածնի մոնիթինգի կոնցենտրացիաների փոփոխությունները.






**Երևան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի ( $SO_2$ ) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**



- Պայմանանշաններ**
- Պասիվ նմուշառման դիտակետեր
  - Ակտիվ նմուշառման դիտակետեր
  - Արդյունաբերական կետեր
  - Ճանապարհներ և փողոցներ
  - Երկաթգծեր
  - Գետային ցանց
  - Երևանի սահմանագիծ




Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի ( $NO_2$ ) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը



Պայմանանշաններ

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակետեր
-  Արդյունաբերական կետեր
-  Ճանապարհներ և փողոցներ
-  Երկաթգծեր
-  Պետային ցանց
-  Երևանի սահմանագիծ

Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ( $մգ/մ^3$ )




## Գյումրի

Գյումրի քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ ստացիոնար դիտակայան և 24 շարժական (պասիվ նմուշառման) դիտակետ:

Ստացիոնար դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 44, շարժական դիտակետերում պասիվ նմուշառման եղանակով՝ 519 փորձանմուշ:

Որոշված միացություններից ընդհանուր փոշու\* միջին ամսական կոնցենտրացիան մարտին չի գերազանցել է ՍԹԿ-ն: Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում համապատասխան ՍԹԿ-ները չեն գերազանցել:




\* Հունվար և փետրվար ամսներին Գյումրի քաղաքի ընդհանուր փոշու տվյալները՝ վստահելիության ցածր լինելու պատճառով օդի որակի գնահատման մեջ հաշվի չեն առնվել

## Վանաձոր




Վանաձոր քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են երեք ստացիոնար դիտակայան և 24 շարժական (պասիվ նմուշառման) դիտակետ:

Ստացիոնար դիտակայաններում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 747, շարժական դիտակետերում պասիվ նմուշառման եղանակով՝ 575 փորձանմուշ:

Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան հունվար և փետրվար ամիսներին գերազանցել է ՍԹԿ-ն 1.5 անգամ, մարտին՝ 1.4 անգամ: Ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան հունվար և փետրվար ամիսներին գերազանցել է ՍԹԿ-ն 1.7 անգամ, մարտին՝ 1.8 անգամ: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան երեք ամիսների ընթացքում չի գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:



Վանաձոր քաղաքի մթնոլորտային օդում ընդհանուր փոշու և ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները.





## Ալավերդի

Ալավերդի քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի օքսիդների և ածխածնի մոնօքսիդի դիտարկումներ: Քաղաքում և հարակից համայնքներում գործում են երեք ստացիոնար դիտակայան և 42 շարժական (պասսիվ նմուշառման) դիտակետ:

Ստացիոնար դիտակայաններից ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 605, շարժական դիտակետերից պասսիվ նմուշառման եղանակով՝ 972 փորձանմուշ: Ստացիոնար դիտակայանում կատարվել է ածխածնի մոնօքսիդի 12937, ծծմբի երկօքսիդի՝ 14349 ավտոմատ դիտարկում:




Ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան հունվարին գերազանցել է ՍԹԿ-ն հունվարին և փետրվարին՝ 2.2 մարտին՝ 1.8 անգամ: Ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան հունվարին գերազանցել է ՍԹԿ-ն 2.8 անգամ, փետրվարին՝ 2.9 անգամ, մարտին՝ 1.2 անգամ: Ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիան երեք ամիսների ընթացքում չի գերազանցել համապատասխան ՍԹԿ-ն:

Ալավերդի քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաների փոփոխությունները.






*Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդի ծծմբի երկօքսիդի ( $SO_2$ ) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը*





- Պայմանանշաններ**
- Պասիվ նմուշառման դիտակետեր
  - Ակտիվ նմուշառման դիտակետեր
  - Գետային ցանց
  - Ծանապարհներ և փողոցներ
  - Միջպետական ճանապարհ
  - Երկաթգծեր
  - Բնակավայրերի սահման

Օդի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ( $մգ/մ^3$ )




**Ալավերդի քաղաքի և հարակից համայնքների մթնոլորտային օդի ազոտի երկօքսիդի ( $NO_2$ ) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**



- Պայմանանշաններ**
- Պասիվ նմուշառման դիտակետեր
  - Ակտիվ նմուշառման դիտակետեր
  - Գետային ցանց
  - Ճանապարհներ և փողոցներ
  - Միջպետական ճանապարհ
  - Երկաթգծեր
  - Բնակավայրերի սահման

Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ( $մգ/մ^3$ )





## Հրազդան

Հրազդան քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ ստացիոնար դիտակայան և 17 շարժական (պասիվ նմուշառման) դիտակետ:



Ստացիոնար դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 250, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 402 փորձանմուշ:

Ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան մարտին գերազանցել է ՍԹԿ-ն 1.2 անգամ: Ծծմբի երկօքսիդի և ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաների փոփոխությունները (պասիվ նմուշառում).




**Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի ( $SO_2$ ) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**




**Պայմանանշաններ**



- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակետեր
- Արդյունաբերական կետեր
- Ճանապարհներ և փողոցներ
- Գետային ցանց
- Բնակավայրերի սահման
- Աղբյուրակ ջրամբար




Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ( $\mu g/m^3$ )




**Հրազդան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի ( $NO_2$ ) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**



- Պայմանանշաններ**
- Պասիվ նմուշառման դիտակետեր
  - Ակտիվ նմուշառման դիտակետեր
  - Արդյունաբերական կետեր
  - Ճանապարհներ և փողոցներ
  - Գետային ցանց
  - Բնակավայրերի սահման
  - Արդյուրակ ջրամբար



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ( $մգ/մ^3$ )




## Արարատ

Արարատ քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ ստացիոնար դիտակայան և 12 շարժական (պասիվ նմուշառման) դիտակետ:

Ստացիոնար դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 84, շարժական դիտակետերում պասիվ նմուշառման եղանակով՝ 286 փորձանմուշ:



Փետրվարին ընդհանուր փոշու միջին ամսական կոնցենտրացիան ( $0,106 \text{ մգ/մ}^3$ ) գերազանցել է ՍԹԿ-ն\*:

Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



\* Հունվար ամսին Արարատի ընդհանուր փոշու տվյալները չեն ներկայացվել տեխնիկական խնդիրների պատճառով

Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաների փոփոխությունները (պասիվ նմուշառում)։





## Հանրապետության տարբեր բնակավայրեր

2018թ. 1-ին եռամսյակում շարժական դիտակետերում պասիվ նմուշառիչներով օդային ավազանի դիտարկումներ կատարվել են հանրապետության Կապան, Քաջարան, Չարենցավան քաղաքներում:

Երեք ամիսների ընթացքում Կապան քաղաքի 11 շարժական դիտակետից պասիվ նմուշառմամբ վերցվել է օդի 129 փորձանմուշ, Քաջարան քաղաքի 15 դիտակետից՝ 180 փորձանմուշ, Չարենցավան քաղաքի 10 դիտակետից՝ 240 փորձանմուշ:

Նշված բնակավայրերի մթնոլորտային օդում ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:

Ծծմբի և ազոտի երկօքսիդների միջին ամսական կոնցենտրացիաների գրաֆիկական պատկերները





## ՄԱԿԵՐԼՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐ

2018թ. 1-ին եռամսյակում կատարվել են մակերևութային և ստորերկրյա քաղցրահամ ջրերի դիտարկումներ:

Մակերևութային ջրերի դիտարկումներ իրականացվել են հանրապետության 37 գետի, Երևանյան լճի, Ապարանի, Ախուրյանի ջրամբարների և Արփա-Սևան թունելի դիտակետերից, որտեղից վերցվել է 123 փորձանմուշ: Վերցված փորձանմուշներում որոշվել է միջին հաշվով 45-ական ֆիզիկաքիմիական ցուցանիշ: Իրականացված դիտարկումների արդյունքները բերված են հավելվածներում աղյուսակների տեսքով: Մակերևութային ջրերի որոշ փորձանմուշներում որոշվել են օրգանական միացությունների պարունակությունները, որոնք չեն գերազանցել համապատասխան էկոլոգիական նորմերը՝ սահմանված ՀՀ կառավարության 2011թ. հունվարի 27-ի N 75-Ն որոշման հավելված N2-ում:

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներ իրականացվել են հանրապետության ազգային կամ հենակետային ցանցում ընդգրկված 100 ստորերկրյա ջրադրյուրներում\*, որոնք ներառում են 24 շատրվանող հորատանցք, 22 չշատրվանող հորատանցք և 56 բնադրյուր: Ջրադրյուրներում ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումները կատարվում են ամսական 6 անգամ հաճախականությամբ:

### Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

#### Մակերևութային ջրեր

Փամբակ գետի Սպիտակից ներքև հատվածում ջրի որակը փետրվարին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս): Վանաձորից վերև հատվածում փետրվար, մարտ ամսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Վանաձորից ներքև հատվածում ջրի որակը փետրվարին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):

Դեբեդ գետի՝ Մարցիգետի թափման կետից ներքև ջրի որակը փետրվարին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս): Այրումից վերև և սահմանի մոտ հատվածներում փետրվարին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Չորագետ գետի Ստեփանավանից վերև հատվածում փետրվար և մարտ ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Մարցիգետ գետի գետաբերանի հատվածում փետրվար և մարտ ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Ախթալա գետի գետաբերանում փետրվար և մարտ ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):




Շնող գետի գետաբերանում փետրվար և մարտ ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):




---

\* Ստորերկրյա ջրերի դիտակետերի տեսակը, համարները, տեղադիրքը տրված է տեղեկանքի 82-րդ էջում աղյուսակի տեսքով

Աղստն գետի՝ Դիլիջանից վերև և ներքև հատվածներում փետրվար ամսին ջրի որակը գնահատվել «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս): Իջևանից վերև, սահմանի մոտ և գետաբերանի հատվածներում փետրվար ամսին ջրի որակը գնահատվել «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «վատ» (5-րդ դաս) :


Գետիկ գետի գետաբերանի հատվածում փետրվար ամսին ջրի որակը գնահատվել է «միջակ» է (3-րդ դաս), մարտին՝ «վատ» (5-րդ դաս) :





**Ստորերկրյա ջրեր**

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 2 բնադբյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ջրի ծախսի միջին ամսական արժեքները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկի տեսքով.




# ԴԵԲԵԴ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ (ՄԱՐՏ 2018)



## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Գյուղեր
- ▲ Մակերևութային ջրերի նմուշառման դիտակետեր
- Վերային ցածր
- 22 պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Դեբեդ գետի ավազան
- Մակերևութային ջրերի որակի դասեր
  - 3-րդ դաս
  - 4-րդ դաս
  - 5-րդ դաս



**ԱՂՍՏԵՎ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿՐԵՎ  
ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**



- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
  - Քաղաքներ
  - Գյուղեր
  - Մակերևութային ջրերի նմուշառման դիտակետեր
  - Ստորերկրյա ջրերի դիտակետեր
  - Գետային ցանց
  - 22 պետական սահման
  - Ազատն զևտի ավազան
- Մակերևութային ջրերի որակի դասեր**
  - 3-րդ դաս
  - 4-րդ դաս
  - 5-րդ դաս


## Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

### Մակերևութային ջրեր

Մարտ ամսին Ախուրյան գետի Գյումրիից վերև հատվածում ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Գյումրիից ներքև հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս), Բագարանից ներքև ընկած հատվածում՝ «վատ» (5-րդ դաս):


Կարկաչուն գետի գետաբերանում մարտ ամսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մեծամոր գետի Վաղարշապատից հարավ ընկած հատվածում հունվար ամիսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), փետրվարին՝ «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «վատ» (5-րդ դաս): Վաղարշապատից հարավ-արևելք ընկած հատվածում հունվար ամիսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), փետրվարին և մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս): Ռանչպարից ներքև ընկած հատվածում հունվար, փետրվար, մարտ ամսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):




### Ստորերկրյա ջրեր

Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 13 բնադրյուրում, 6 շատրվանող և 17 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ծախսի և մակարդակի չափումները երեք ամիսների համար ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:




Շատրվանոցի հորատանցքեր  
Ծախս, լ/վ

Ախուրյանի ՋԿՏ




Չշատրվանոցի հորատանցքեր  
Մակարդակ, մ

Ախուրյանի ՋԿՏ




Գրունտային ջրհորներ  
Մակարդակ, մ

Ախուրյանի ՋԿՏ




ԱՌՈՒՐՅԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ  
 ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ (ՄԱՐՏ 2018)






**ՄԵԾԱՄՈՐ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ  
ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**


**Հունվար / 2018**



**Փետրվար / 2018**



**Մարտ / 2018**



- ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԼՇԱՆՆԵՐ**
- Մարզկենտրոն
  - Քաղաքներ
  - Գյուղեր
  - Ստորերկրյա ջրերի դիտակետեր
  - Գետային ցանց
  - ՀՀ պետական սահման
  - Լճեր և ջրամբարներ
  - Մեծամոր գետի ավազան



- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 3-րդ դաս
  - 4-րդ դաս
  - 5-րդ դաս

## Հրագրանի ջրավազանային կառավարման տարածք

### Մակերևութային ջրեր



Քասախ գետի ջրի որակը Ապարանից վերև հատվածում փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «լավ» (2-րդ դաս): Ապարանից ներքև հատվածում փետրվար և մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս): Աշտարակից վերև և ներքև հատվածներում փետրվար, մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Քասախ գետի գետաբերանի հատվածում հունվար, փետրվար և մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):





Շաղվարդ գետի Փարպիից ներքև հատվածում փետրվարին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):

Հրագրան գետի Քաղսիից ներքև, Արգելից ներքև, Արգնի ՀԷԿ-ի մոտ, Դարբնիկի մոտ, Գեղանիստի մոտ և գետաբերանի հատվածներում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գետառ գետի գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):




Մարմարիկ գետի գետաբերանի հատվածում հունվար և փետրվար ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս):









**Ստորերկրյա ջրեր**

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 6 բնադրյուրում, 9 շատրվանող և 7 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի ծախսի և մակարդակի միջին ամսական արժեքները ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:





**ՔԱՄԱԽ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿՐ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**




**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**



- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Գյուղեր
- Ջրմբ. նմուշառման դիտակետեր
- ▲ Մակերևութային ջրերի նմուշառման դիտակետեր
- ▲ Ստորերկրյա ջրերի դիտակետեր
- Գետային ցանց
- Լճեր և ջրամբարներ
- Քասախ գետի ավազան

**Մակերևութային ջրերի որակի դասեր**

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



**ՀՐԱԶԴԴԱՆ ՔԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ**



**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**

- Մարզկենտրոն
- Բաղարներ
- Գյուղեր
- Զբոս. նմուշառման դիտակետեր
- ▲ Մակերևութային ջրերի նմուշառման դիտակետեր
- ▲ Ստորերկրյա ջրերի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- ԵՐԵՎԱՆ
- Հրազդան գետի ավազան



- Մակերևութային ջրերի որակի դասեր**
- 3-րդ դաս
  - 4-րդ դաս
  - 5-րդ դաս

## Մեանի ջրավազանային կառավարման տարածք

### Մակերևութային ջրեր

Չկնազետ գետի գետաբերանի հատվածում մարտին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Մասրիկ գետի՝ գետաբերանի հատվածում մարտին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Սոթք գետի՝ գետաբերանի հատվածում մարտին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Կարճաղբյուր գետի՝ գետաբերանի հատվածում մարտին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Վարդենիս գետի՝ գետաբերանի հատվածում մարտին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Արգիճի գետի՝ գետաբերանի հատվածում մարտին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


Ծակքար գետի՝ գետաբերանի հատվածում մարտին ջրի որակը գնահատվել է «լավ» (2-րդ դաս):

Շողվազ գետի՝ գետաբերանի հատվածում մարտ ամսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):




Գավառազետ գետի գետաբերանի հատվածում մարտ ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

### Ստորերկրյա ջրեր

Մեանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 5 բնաղբյուրում, 6 շատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:







**ՄԵՎԱՆԻ ԶՐԱՎԱԶԱՆԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԳԵՏԵՐԻ ԶՐԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԱՏՈՐԵՐԿՐԹԱ ԶՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ (ՄԱՐՏ 2018)**



**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**

- Մարզկենտրոն
  - Քաղաքներ
  - Գյուղեր
  - ▲ Մակերևութային ջրերի ննուշառման դիտակետեր
  - ▲ Ստորերկրյա ջրերի դիտակետեր
  - Գետային ցանց
  - ՀՀ պետական սահման
  - Լճեր և ջրամբարներ
  - Մեանի ջրավազանային կառավարման տարածք
- 
- Մակերևութային ջրերի որակի դասեր
- 2-րդ դաս
  - 3-րդ դաս
  - 4-րդ դաս
  - 5-րդ դաս



## Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

### Մակերևութային ջրեր



Մարտին Արփա գետի ջրի որակը Վայքից վերև և ներքև, Եղեգնաձորից վերև հատվածներում գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Արենիից ներքև հատվածում՝ «անբավարար» (4-րդ դաս):





Արփա-Սևան թունելի ջրի որակը Ծովինարից վերև հատվածում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Եղեգիս գետի Շատին գյուղից ներքև ընկած հատվածում մարտին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):


### Ստորերկրյա ջրեր

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 11 բնադրյուրում, 3 շատրվանող և 10 չշատրվանող հորատանցքերում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը: Ջրի ծախսի և մակարդակի միջին ամսական արժեքներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:





**ԱՐՓԱ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ  
ԵՎ ՍՏՈՐԵՐԿՐՅԱ ՋՐԵՐԻ ԴԻՏԱԿԵՏԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ (ՄԱՐՏ 2018)**



**ՊԱՅՄԱՆԱՎԱՆ ԼՇԱՆՆԵՐ**

● Մարզկենտրոն	● Մակերևութային ջրերի որակի դասեր
● Քաղաքներ	● 3-րդ դաս
● Գյուղեր	● 4-րդ դաս
● Ջրմբ նմուշառման դիտակետեր	
● Մակերևութային ջրերի նմուշառման դիտակետեր	
● Ստորերկրյա ջրերի դիտակետեր	
— Գետային ցանց	
— ՀՀ պետական սահման	
— Լճեր և ջրամբարներ	
— Արփա գետի ավազան	

0 3 6 12 կմ

## Հարավային ջրավազանային կառավարման տարածք

### Մակերևութային ջրեր

Մեղրիգետի՝ Մեղրիից վերև և գետաբերանի հատվածներում մարտ ամսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Կարճևան գետի գետաբերանում մարտին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարտին Ողջի գետի ջրի որակը Քաջարանից վերև և Կապանից վերև հատվածներում գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Քաջարանից ներքև և Կապանից ներքև ընկած հատվածներում՝ «վատ» (5-րդ դաս):

Աճանան (Նորաշենիկ) գետի գետաբերանի հատվածում մարտ ամսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Գեղի գետի գետաբերանի հատվածում մարտին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):


Որոտան գետի ջրի որակը Գորայքից վերև, Միսիանից վերև և ներքև, հատվածներում մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Տաթև ՀԷԿ-ից ներքև հատվածում՝ «վատ» (5-րդ դաս):

Միսիան գետի գետաբերանի հատվածում մարտին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Վարարակ՝ գետի, Գորիսից վերև հատվածում մարտ ամսին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Գորիսից ներքև հատվածում՝ մարտ ամսին ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

### Ստորերկրյա ջրեր


Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 7 բնադրյություն, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Ջրի ծախսի և մակարդակի միջին ամսական արժեքներն ըստ դիտակետերի ներկայացված են գրաֆիկների տեսքով:




\* Գորիսգետ գետի անունը վերանվանվել է Վարարակ

Ծախս, լ/վ

Հարավային ՉԿՏ



ՄԵՂՐԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ (ՄԱՐՏ 2018)




**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**

<span style="color: green;">●</span> Քաղաքներ	Մակերևութային ջրերի որակի դասեր
<span style="color: orange;">●</span> Գյուղեր	<span style="color: yellow;">●</span> 3-րդ դաս
<span style="color: blue;">—</span> Գետային ցանց	<span style="color: red;">●</span> 5-րդ դաս
<span style="color: red;">—</span> ՀՀ պետական սահման	
<span style="color: red; border: 1px solid red; padding: 2px;"> </span> Մեղրի գետի ավազան	


0 1 2 4 6 կմ



**ՈՂՋԻ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՈՐԱԿԸ (ՄԱՐՏ 2018)**



ՈՐՈՏԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԶՐԵՐԻ ՈՐԱԿԸ (ՄԱՐՏ 2018)



**ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ**



	Քաղաքներ		Մակերևութային ջրերի որակի դասեր
	Գյուղեր		3-րդ դաս
	Մակերևութային ջրերի նմուշառման դիտակետեր		4-րդ դաս
	Գետային ցանց		5-րդ դաս
	22 պետական սահման		
	ԼՃեր և ջրամբարներ		
	Որոտան գետի ավազան		

0 50 100 150 200 կմ

## Արաքս գետ


2018թ. փետրվար և մարտ ամիսներին վերցվել են փորձանրմուշներ Արաքս գետի ջրի 11 դիտակետից: Վերցված ջրի փորձանմուշներում որոշված ցուցանիշներից, ըստ ձկնատնտեսական ՍԹԿ-ով գնահատման, դիտվում է վանադիումով, որոշ փորձանմուշներում պղնձով, քրոմով, մանգանով, երկաթով, ալյումինով և մեկ փորձանրմուշում՝ նիկելով բարձր աղտոտվածություն: Որոշված մյուս ցուցանիշներից գերազանցվել են ԹԿՊ<sub>5</sub>-ի, ԹՔՊ-ի, ամոնիում, նիտրիտ և սուլֆատ իոնների, ցինկի, նիկելի, կոբալտի, մագնեզիումի և սելենի ՍԹԿ-ները: Արաքս գետի աղտոտվածության գերազանցումների վերաբերյալ մանրամասն տեղեկություն ըստ առանձին ամիսների տրվում է հավելված 3-ում: Հատակային նստվածքներում որոշված որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները բերված են հավելված 3-ում:

### ԱՐԱՔՍ ԳԵՏԻ ՋՐԻ ՈՐԱԿԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՑԱՆՑ



## ԹԱՓՈՆՆԵՐ

2018 թվականի 1-ին եռամսյակում թափոնների հետազոտության նպատակով ուսումնասիրվել են Դիլիջան քաղաքի հին և նոր կոմունալ աղբավայրերը: Աղբավայրերում կայուն օրագանական աղտոտիչների պարունակությունները որոշելու համար նմուշառվել են 22 հողի և 4 ջրի փորձանմուշ: Յուրաքանչյուր նմուշում որոշել է 19 քլորօրգանական պեստիցիդներ և 24 պոլիքլորացված բիֆենիլներ: Բոլոր նմուշները հետազոտության փուլում են: Փորձանմուշներում որոշված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվություն կտրվի տարեկան տեղեկանքում:



## Շաղկաձորում շրջակա միջավայրի մոնիթորինգ


### Մթնոլորտային օդ

Շաղկաձոր քաղաքում կատարվում են ընդհանուր փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ ստացիոնար դիտակայան և 14 շարժական (պասիվ նմուշառման) դիտակետ:



Ստացիոնար դիտակայանում ակտիվ նմուշառման եղանակով վերցվել է օդի 252, շարժական դիտակետերից պասիվ նմուշառման եղանակով՝ 334 փորձանմուշ:

Մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:


Շաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները.



Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի կոնցենտրացիաների փոփոխությունները.




**Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի ( $SO_2$ ) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**



- Պայմանանշաններ**
-  Պասիվ նմուշառման դիտակետեր
  -  Ակտիվ նմուշառման դիտակետեր
  -  Գետային ցանց
  -  Ճանապարհներ և փողոցներ
  -  Բնակավայրերի սահման

Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ<sup>3</sup>)



**Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի ( $NO_2$ ) միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**




**Պայմանանշաններ**

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակետեր
-  Գետային ցանց
-  Հանապարհներ և փողոցներ
-  Բնակավայրերի սահման



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը ( $մգ/մ^3$ )





**Տանձադրյուր գետի ջրի որակը 2018թ. 1-ին եռամսյակում**

**Հունվար**

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդան	Տանձադրյուր	Ծաղկաձոր քաղաքից ներքև (312)	ԹԿՊ <sub>5</sub> , ԹՔՊ, կոբալտ, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, վանադիում	4-րդ	
			Մանգան	5-րդ	

**Փետրվար**

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդան	Տանձադրյուր	Ծաղկաձոր քաղաքից վերև (311)	ԹԿՊ <sub>5</sub> , վանադիում, կոբալտ, երկաթ, բարիում, ալյումին	3-րդ	5-րդ
			Մանգան	5-րդ	
		Ծաղկաձոր քաղաքից ներքև (312)	ԹԿՊ <sub>5</sub> , ԹՔՊ, կոբալտ, կալիում, ԸԱԱ	3-րդ	5-րդ
			Ֆոսֆատ իոն, բարիում, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
			Ամոնիում իոն, մանգան, վանադիում	5-րդ	

**Մարտ**



Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Հրազդան	Տանձաղբյուր	Ծաղկաձոր քաղաքից վերև (311)	Վանադիում, ալյումին	3-րդ	3-րդ
		Ծաղկաձոր քաղաքից ներքև (312)	Նիտրիտ իոն, կոբալտ, ՇԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
			Ֆոսֆատ իոն, վանադիում, կալիում	4-րդ	
			Ամոնիում իոն, մանգան	5-րդ	

**Մթնոլորտային տեղումներ**

2018թ. 1-ին եռամսյակի ընթացքում Ծաղկաձորում վերցվել է 4 անձրևի, 6 ձյան և 3 ձնախառն անձրևի փորձանմուշ: Վերցված փորձանմուշներում որոշվել են 35-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները ստորև բերվում են աղյուսակի տեսքով.


Ամսաթիվ	Ցուցանիշներ						
	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն (մկՍմ/սմ)	Սուլֆատ իոն (մգ/լ)	Քլորիդ իոն (մգ/լ)	Նիտրատ իոն (մգ/լ)	Ֆտորիդ իոն (մգ/լ)	Ամոնիում իոն (մգ/լ)
18-19.01.2018	6.27	21.9	4.61	3.00	2.70	0.009	0.219
19-20.01.2018	6.20	21.4	3.85	2.30	4.80	0.010	0.482
25-26.01.2018	6.57	42.4	5.16	0.94	4.56	0.005	1.270
18-19.02.2018	6.47	15.3	1.21	0.99	0.93	0.017	0.324
26-27.01.2018	6.32	32.9	5.17	1.12	2.84	0.005	1.920
02-03.03.2018	6.01	11.3	1.52	0,50	0.94	0,004	0.360
04-05.03.2018	6.68	43.1	6.51	0,92	3.77	0,005	2.098
05-06.03.2018	6.42	28.4	5.25	0,42	2.37	0,005	1.388
07-08.03.2018	7.07	50.5	5.04	0,86	2.25	0,005	1.204
15-16.03.2018	6.92	72.0	9.98	2,35	6.98	0,006	1.296
25-26.03.2018	7.19	45.7	4.13	0,93	1.58	0,004	1.090
29-30.03.2018	6.58	52.3	5.27	0,82	2.00	0,006	1.278
30-31.03. 2018	7.09	43.2	3.34	0,52	0.96	0,005	1.046

# ՏԱՆՁԱՂԲՅՈՒՐ ԳԵՏԻ ՋՐԻ ՈՐԱԿԸ



## ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

-  Մակերևութային ջրի նմուշառման դիտակետ
-  Գետային ցանց
-  Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի որակի դասեր
  -  3-րդ դաս
  -  5-րդ դաս



**«Եվրոպայի մեծ հեռավորությունների վրա անդրսահմանային աղտոտիչների տարածման դիտարկումների և գնահատման համատեղ ծրագիր»**

**Մթնոլորտային օդ**

Ամբերդի ստացիոնար կայանում 2018թ. 1-ին եռամսյակում վերցվել է օդի 65 և փոշու 23 փորձանմուշ:

Օդի փորձանմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու փորձանմուշներում՝ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 քիմիական տարրի պարունակությունները: Ավտոմատ եղանակով գետնամերձ օդոնի պարունակության որոշման համար կատարվել է օդի 646 դիտարկում:

Ազոտի երկօքսիդի և ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաները մարտ ամսին չեն գերազանել ՍԹԿ-ները ( $ՍԹԿ_{միջ.}=0.04մգ/մ^3$ ):



**Մթնոլորտային տեղումներ**

2018թ. 1-ին եռամսյակի ընթացքում Ամբերդի կայանում վերցվել է 5 անձրևի փորձանմուշ: Վերցված փորձանմուշում որոշվել են 35 ցուցանիշ: Որոշված ցուցանիշներից մի մասի կոնցենտրացիաները ստորև բերվում են աղյուսակի տեսքով.

Ամսաթիվ	Ցուցանիշներ						
	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն (մկՍմ/սմ)	Սուլֆատ իոն (մգ/լ)	Քլորիդ իոն (մգ/լ)	Նիտրատ իոն (մգ/լ)	Ֆտորիդ իոն (մգ/լ)	Ամոնիում իոն (մգ/լ)
09.03.2018	7.19	37.8	3.64	0.66	1.92	0.005	0.89
24.03.2018	7.58	148.9	22.87	2.96	14.14	0.007	0.59
29.03.2018	7.52	62.0	4.00	0.68	1.64	0.005	2.70
30.03.2018	7.40	72.5	6.11	2.12	2.91	0.114	1.58
31.03.2018	7.22	25.7	1.44	0.39	0.67	0.004	0.59

ՀՀ գետերի ջրի որակը 2018թ. 1-ին եռամսյակում

**Հունվար**

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Ախուրյան	Մեծամոր	10 կմ ք. Վաղարշապատից հարավ (40)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան	3-րդ	3-րդ
		11 կմ ք. Վաղարշապատից հարավ-արևելք (41)	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան	3-րդ	3-րդ
		0,5 կմ գյ. Ռանչպարից ներքև (42)	Ամոնիում իոն, նիտրիտ իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան	3-րդ	3-րդ
Հրազդան	Քասախ	Գետաբերան (47)	Ֆոսֆատ իոն, վանադիում	3-րդ	3-րդ
	Հրազդան	0,5 կմ գյ. Քաղսիից ներքև (52)	ԹԿՊ <sub>5</sub> , ԹՔՊ, մանգան	3-րդ	5-րդ
			Կալիում	4-րդ	
			Վանադիում	5-րդ	
		0,5 կմ գյ. Արգելից ներքև (53)	ԹԿՊ <sub>5</sub> , ԹՔՊ, ֆոսֆատ իոն, կալիում	3-րդ	5-րդ
			Մանգան	4-րդ	
			Վանադիում	5-րդ	
		0,5 կմ Արզնի ՀԷԿ-ից ներքև (54)	ԹԿՊ <sub>5</sub> , նիտրատ իոն, կալիում	3-րդ	5-րդ
			Վանադիում	5-րդ	
		6 կմ ք. Երևանից ներքև. գյ. Դարբնիկի մոտ (55)	Կոբալտ, երկաթ, ալյումին, քլորիդ իոն, ՇՆԱ, ԿՆ	3-րդ	5-րդ
	ԹՔՊ, նիտրիտ իոն, կալիում, ՇՆԱ, ընդհանուր ֆոսֆոր		4-րդ		
	Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, վանադիում		5-րդ		

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս	
Հրազդան	Հրազդան	Գետաբերան (56)	ԹՔՊ, նիտրիտ իոն, նիտրատ իոն, կալիում, ԼՍԱ, ընդհանուր ֆոսֆոր, քլորիդ իոն, սուլֆատ իոն, ԸԼԱ	3-րդ	5-րդ	
			Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան	4-րդ		
			Վանադիում	5-րդ		
		գյ. Գեղանիստ (225)	ԹՔՊ, նիտրատ իոն, մանգան, կալիում, նատրիում, ԼՍԱ, քլորիդ իոն, ԸԼԱ	3-րդ		5-րդ
			Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն	4-րդ		
			Վանադիում	5-րդ		
	Գետառ	Գետաբերան (59)	ԹԿՊ <sub>5</sub> , մանգան,	3-րդ	5-րդ	
			ԹՔՊ, կալիում	4-րդ		
			Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, վանադիում, ԼՍԱ, ընդհանուր ֆոսֆոր	5-րդ		
	Մարմարիկ	Գետաբերան (58)	ԹԿՊ <sub>5</sub> , կորալտ, երկաթ	3-րդ	5-րդ	
			Վանադիում, կալիում	4-րդ		
			ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, ԼՍԱ, ընդհանուր ֆոսֆոր, ԿՆ	5-րդ		

3-րդ դաս՝ «միջակ» որակ, 4-րդ դաս՝ «անբավարար» որակ, 5-րդ դաս՝ «վատ» որակ

**Փետրվար**

Ջրավազանային կառավարման տարածք	Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրություն (Դիտակետի համար)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս		
Հյուսիսային	Փամբակ	0,5 կմ ք. Սպիտակից ներքև (2)	ԹԿՊ, ԹԲՊ, ԸԱԱ	3-րդ	4-րդ		
			Նիտրատ իոն	4-րդ			
